Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին թիվ 2113382274 և 2113421181 որոշումներն անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման թողնելու մասին

<<02>>11 2021թ. 7-13 16443 ք.Երևան

Ճանապարհային ոստիկանության պետի պաշտոնակատար, ոստիկանության գնդապետ Ն.Սարգսյանս, վերանայելով Հայկ Գեղամյանի ՄԴ/83151-21 դիմումի քննարկման արդյունքում ստեղծված նյութերը՝

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Քանաքեռ 15 փողոցի 15 տան բնակիչ Հայկ Գեղամյանը դիմումով խնդրել է վերանայել Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին թիվ 2113382274 և 2113421181 որոշումները՝ նշելով, իր անհամաձայնությունը կայացված որոշումների վերաբերյալ:

Դիմումի քննարկման արդյունքում պարզվել է, որ դիմումատուի փաստարկը չի կարող վարչական ակտը բեկանելու հիմք հանդիսանալ հետևյալ պատճառաբանությամբ.

<<Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին>> օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթի իրավախախտման հատկանիշների պարզման փուլում իրավախախտումը հիմնավորող ապացույցը իրավախախտումն ամրագրած **տեսանյութն է կամ լուսանկարը,** որը պարունակում է նաև տեխնիկական միջոցով արձանագրված տվյալները: Ըստ նույն հոդվածի 2-րդ մասի՝ որպես իրավախախտումը հիմնավորող ապացույց վարչական կամ դատական կարգով բողոքարկման վարույթում կարող են օգտագործվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի **251-րդ հոդվածով նախատեսված ապացույցները**:

ՀՀ կառավարության <<Ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների ու պայմանների ցանկը սահմանելու մասին>> 28.06.2007թ. թիվ 955-Ն որոշման 80-րդ կետի համաձայն՝ տրանսպորտային միջոցը տեղակայել թույլատրվում է երթևեկելի մասի եզրին զուգահեռ մեկ շարքով՝ բացառությամբ այն տեղերի /երթևեկելի մասի տեղային լայնացում/, որտեղ գծանշմամբ թույլատրված են տրանսպորտային միջոցների դասավորման այլ ձևեր, նույն որոշման 25-րդ կետի համաձայն՝ արգելվում է առավելություն ստանալու, ինչպես նաև կանգառն արգելված վայրերում կանգառ կատարելու (բացառությամբ հարկադրված կանգառի) նպատակով վթարային ազդանշանի օգտագործումը:

Վարչական տույժ նշանակելու մասին թիվ 2113382274 որոշման իրավախախտման PIN անհատական ծածկագրի տակ զետեղված տեսանյութի դրվագային ուսումնասիրությունն ակնհայտ է դարձնում այն փաստը, որ դիմումատուին պատկանող տրանսպորտային միջոցը 23.08.2021թ. ժամը՝ 19:43-ին Երևան քաղաքի Հ.Քոչար-Վաղարշյան փողոցների խաչմերուկի հատվածում, իրավախախտումը կատարած վայրում կանգառ է կատարել **երթևեկելի մասի եզրին ոչ զուգահեռ՝** ժամը՝ 19:43:09 վայրկյանից 19:44:30-րդ վայրկյանը ներառյալ, որի տևողությունը կազմել է 81 վայրկյան:

Ինչ վերաբերվում է վարչական տույժ նշանակելու մասին թիվ 2113421181 որոշմանը, ապա իրավախախտման PIN անհատական ծածկագրի տակ զետեղված տեսանյութի դրվագային ուսումնասիրությունն ակնհայտ է դարձնում այն փաստը, որ դիմումատուին պատկանող տրանսպորտային միջոցը 30.08.2021թ. ժամը՝ 19:05-ին Երևան քաղաքի Հ.Քոչար-Վաղարշյան փողոցների խաչմերուկի հատվածում, իրավախախտումը կատարած վայրում կանգառ է կատարել **երթևեկելի մասի եզրին ոչ զուգահեռ՝** ժամը՝ 19:04:38 վայրկյանից 19:05:58-րդ վայրկյանը ներառյալ, որի տևողությունը կազմել է 80 վայրկյան:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 21-րդ մասի համաձայն՝ տրանսպորտային վարորդների կողմից կանգառի և (կամ) կայանման կանոնները խախտելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկի չափով, տուգանային միավորի կիրառում՝ 0.5 միավոր:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 39-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 21-րդ և 25-րդ մասերով (միայն կանգառ կատարելու մասով) նախատեսված վարչական իրավախախտումն ունի նվազ նշանակություն այն դեպքում, երբ կանգառը կատարվել է **միայն ուղևորների նստելու կամ իջնելու նպատակով, չի գերազանցել մեկ րոպե ժամանակահատվածը, և դրա հետևանքով երթևեկության մյուս մասնակիցների համար խոչընդոտ կամ վթարային իրադրություն առաջացնելու ակնհայտ վտանգ չի ստեղծվել:**

Այսպիսով, հիմնավորվել է, որ Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին թիվ 2113382274 և 2113421181 որոշումներն իրավաչափ են և օրինական:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

<u>Ո Ր Ո Շ Ե Ց Ի</u>

1. Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին թիվ 2113382274 և 2113421181 որոշումները թողնել անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման.

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հանձնելու օրվան հաջորդող օրը և կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում.

3. Սույն որոշման օրինակն ուղարկել Հայկ Գեղամյանին:

Ն.Մարգսյան

Կատարող Ա.Օսիկյան
Հեռ.՝ 060-83-84-02